Հայտարարություն

«Երևանի պետական բազմամասնագիտական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողների հետևյալ թափուր աշխատատեղերի համար.

1. «Հայաստանի պատմություն» առարկայի դասախոս՝ շաբաթական 17 ժամ ծանրաբեռնվածությամբ
2. «Ինֆորմատիկա և ՏՀՏ» առարկայի դասախոս՝ շաբաթական 11 ժամ ծանրաբեռնվածությամբ :

Կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

Ունումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Տվյալ բնագավառում աշխատանքային գործունեության փորձը ցանկալի է: Կազմակերպում է դասեր՝ կիրառելով ժամանակակից մեթոդներ, տեսանյութեր և փաստաթղթեր: Գնահատում է ուսանողների առաջադիմությունը հարցումների, թեստերի և բանավեճերի միջոցով: Նպաստում է ազգային արժեքների, մշակույթի հանդեպ հարգանքի ձևավորմանը:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում
2. Կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ դիպլոմ (բնօրինակ և պատճեն)
3. Անձնագիր (բնօրինակ և պատճեն)
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն)
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Մեր հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքևխյան 20, հեռախոս 63-40-70, Էլփոստի հասցեն՝ 4usumnaran@mail.ru :

Մրցույթը կկայանա 2026թ. սեպտեմբերի 14-ին ժամը 13.00-ին «Երևանի պետական բազմամասնագիտական քոլեջ» ՊՈԱԿ-ում: